ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզ Վանաձոր համայնք

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի 8Դ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Քոչարյան Աստղիկ Յուրիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղություններ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում է 27աշակերտ, որից 13-ը աղջիկ է, 14-ը՝տղա:Դասարանում ընդհանուր առմամբ տիրում է առողջ մթնոլորտ:Դասարանը որոշ չափով ձևավորված թիմ է : Աշակերտների մեջ մշակված են միասնական աշխատելու, համագործակցելու կարողություններ: Դասարանում ապահովված է փոխադարձ վստահություն և բարյացկամության մթնոլորտ:Աշակերտները ակտիվ են, նախաձեռնող և ստեղծագործաբար են վերաբերվում դասարանի աշխատանքներին: Ուսման նկատմամբ սովորողներն ունեն դրական վերաբերմունք և ճանաչողական գործունեության նկատմամբ կայուն հետաքրքրություն:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

1. Աշակերտներտների սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրություն

2. Կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի

փոխհարաբերությունների վերլուծություն , համակարգում,

3. Դասղեկի ժամերի կազմակերպում, տևական զրույցներ,

ստեղծագործական միջոցառումների կազմակերպում

4. Ծնողական ժողովների կազմակերպում,

5. Աշակերտների առաջադիմությանն ու վարքային նորմերին հետևելու կանոնների մշակում և հստակեցում, որին ներգրավված կլինի նաև ծնողը.

6. Աշխատանք առարկայական ուսուցիչների հետ,

7. Դասարանական ժողովների անցկացում,

8. Այցելություններ պատմամշակութային վայրեր, բնության գիրկ

9. Սովորողների հանրօգուտ աշխատանքի կազմակերպում

3.Հայեցի դաստիարակություն

9.1 - Հոգևոր դաստիարակություն

Զարգացնել հոգեմտավոր աշխարհը,ազգային դիմագիծը պահելու,քրիստոնեական հավատքով ձեռքբերված հոգևոր արժեքները պահպանելու և սերունդներին հայեցի դաստիարակելու համար օգտվել մեր ազգային ավանդույթներից, ծեսերից, տոներից: Կազմակերպել զրույցներ հոգևոր մշակույթի նվիրյալների հայրենանվեր գործունեության մասին: Հոգևոր դաստիարակության նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ:Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ զարգացնել գեղեցիկը բնության,մարդու և արվեստի մեջ տեսնելու և գնահատելու կարողությունը:Կազմակերպել մշակութային միջոցառումներ,էքսկուրսիաներ՝շփվելու գեղեցիկի դրսևորման զանազան ձևերի հետ: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային, համամարդկային արժեքներին, ձևավորել դրանց համադրման և արժեվորման կարողություններ, նպաստել աշակերրտների արժեքային համակարգի կազմավորմանը՝ հայրենասիրության , մարդասիրության հանդուրժողականության հիմքերի վրա : Ձևավորել հպարտության զգացում երկրի հանդեպ Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը: Բացտրել ինչ է հայրենասիրությունը : Հարգանք սերմանել մեր երկրի դրոշի, օրհներգի և զինանշանի վերաբերյալ:

Ֆիզիկական դաստիարակություն

Ուշադրություն դարձնել աշակերտների կեցվածքի, քայլքի, դասարանում ճիշտ նստելու վրա: Ծանոթացնել և հետևել հիգիենայի կանոնների պահպանմանը: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Սերտորեն համագործակցել ուսուցիչների հետ, ներգրավել նրանց ծնողների և երեխաների համար կազմակերպվող թեմատիկ խորհրդատվություններին՝կապված սովորողների ֆիզիկական առողջության պահպանման խնդիրների հետ: Անցկացնել քննարկումներ սանիտարահիգիենիկ պահանջների վերաբերյալ:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Զարգացնել սովորողների և' մտավոր,և' ֆիզիկական աշխատանքայինհմտությունները:ու կարողությունները: Սովորողների հետ անցակցնել զրույցներ աշխատանքի ծագման ու զարգացման պատմության տարբեր պատմական ժամանակաշրջաններում կիրառվող աշխատանքի տեսակների մասին: Մասնակից դարձնել կազմակերպվող հանրօգուտ աշխատանքներին:

Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Զբոսանքների, զրույցների էքսկուրսիաների միջոցով հասնելնրան, որ աշակերտները կարողանան տեսնել, գնահատել կանխել իրենց շրջապատում բնապահպանական խախտումները և ունենան հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

Դպրոց-ընտանիք կապը

Ապահովել սովորողների՝ ուսումնական գործունեության վերահսկումը ծնողների կողմից, նպաստել ծնողների, աշակերտների և դասավանդող ուսուցիչների արդյունավետ համագործակցությունը:Հաճախակի ծնողներին ապահովել տեղեկատվությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Ավագի, աշխորհրդի անդամների ընտրություն, կազմակերպական անկյունի ստեղծում	4-10/09	աշակերտ դասղեկ
II	Վ. Համբարձումյանի մասին տեսաֆիլմի դիտում	11-17/09	աշակերտ դասղեկ
III	«Կարողությունների հստակեցում» թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	18-24/09	աշակերտ դասղեկ
IV	«Ո՞վ է իմ իդեալը» թեմայով զրույց	25-30/09	աշակերտ դասղեկ

V	«Բնական պաշարներ» թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	2-8/10	աշակերտ դասղեկ
VI	«Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում» նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	9-15/10	աշակերտ դասղեկ
VII	«Ես իմ պետության մի մասնիկն եմ» թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել մեր պետության ծագման և ձևավորման ուղին:	16-20/10	աշակերտ դասղեկ
VIII	«Էկոլոգիական հիմնախնդիրներ» : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	30-5/11	աշակերտ դասղեկ
IX	«Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը» ասոցիացնել հին և նոր դասը տալ խնդրին նոր լուծումներ:	6-12/11	աշակերտ դասղեկ
X	«Գնահատիր ինքդ քեզ» նպատակն է արժևորել արժեհամակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	13-19/11	աշակերտ դասղեկ
XI	«Գնահատվող մրցույթ» թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	20-26/11	աշակերտ դասղեկ
XII	«Բնական աղետներ» ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	27-3/12	աշակերտ դասղեկ
XIII	«Զրույց անհատի և հասարակության խնդիրների մասին» նպատակն է աշակերտներին տեղեկացնել, թե մարդկությունը ի՞նչ ժամանակաշրջան է անցել:	4-10/12	աշակերտ դասղեկ
XIV	Դասարանի ամանորյա ձևավորում	11-17/12	աշակերտ դասղեկ
XV	Ամանորյա խնջույքի կազմակերպում	18-24/12	աշակերտ դասղեկ
XVI	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	8-14/01	աշակերտ դասղեկ
XVII	«Ազգային և միջազգային տոներ» նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	15-21/01	աշակերտ դասղեկ
XVIII	Շնորհավոր տոնդ հայոց բանակ	23-28/01	աշակերտ դասղեկ

XIX	«Եկեղեցին և ազգը» քննարկման միջոցով աշակերտների մոտ կիիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	29/4/02	աշակերտ դասղեկ
XX	«Տեառընդառաջ» տոնի մեկնություն,այց սբ. Սարգիս եկեղեցի:	5-11/02	աշակերտ դասղեկ
XXI	«Լրատվամիջոցներ և կերպարներ» թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	12-18/02	աշակերտ դասղեկ
XXII	«Բարեկամներ և թշնամիներ» քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	19-25/02	աշակերտ դասղեկ
XXIII	«Ինչպես վարվել աղբի հետ» օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	26-3/03	աշակերտ դասղեկ
XXIV	«Սպառողների իրավունքներ» ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները, որպես սպառողներ:	4-10/03	աշակերտ դասղեկ
XXV	«Քաղաքացիական ինքնություն» կիմանան՝ ինչ է քաղաքացիական ինքնությունը, կհասկանան, թե քաղաքացի լինելն ինչքանո՞վ է առնչվում իրենց հետ:	11-17/03	աշակերտ դասղեկ
XXVI	«Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	18-24/03	աշակերտ դասղեկ
XXVII	«Ապագայի ծառը» խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	1-7/04	աշակերտ դասղեկ
XXVIII	«Գնահատվող մրցույթ» աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները:	8-14/04	աշակերտ դասղեկ
XXIX	«Նախապաշարումների ոստյան» ներկայացնել, թե ինչպե՞ս է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	15-21/04	աշակերտ դասղեկ
XXX	«Հայոց Մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը:	22-28/04	աշակերտ դասղեկ
XXXI	«Պատասխանատու քաղաքացի» աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան, թե ինչպիսին պետք է լինի քաղաքացի:	29-5/05	աշակերտ դասղեկ
XXXII	«Ազգային զարթոնք» ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողությունների: Նպատակն է	6-12/05	աշակերտ դասղեկ

	աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:		
XXXIII	«Ասացվածքի ամբիոն» աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք:	13-19/05	աշակերտ դասղեկ
XXXIV	«Ուստարվա աշխատանքների ամփոփում» աշակերտները կամփոփեն իրենց ձեռքբերումները: էքսկուրսիայի կազմակերպում:	20-26/05	աշակերտ դասղեկ